ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

«12» հոկտեմբեր 2023 թ. N 104-Ա/Լ

ՊԵՏԱԿԱՆ ՀԱՎԱՍՏԱԳՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ ՕՐԹՈՊԵԴԻԿ ԿՈՇԻԿԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՑՈՒՑՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 1035-Ն որոշման կիրարկումն ապահովելու նպատակով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել՝ պետական հավաստագրի հիման վրա օրթոպեդիկ կոշիկի տրամադրման ցուցումների վերաբերյալ մեթոդական ուղեցույցը՝ համաձայն հավելվածի:

2. Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (այսուհետ՝ նախարարություն) հավասար հնարավորությունների ապահովման վարչության պետին՝ ապահովել սույն հրամանի տրամադրումը Առողջապահության նախարարությանը, մարզպետների աշխատակազմեր և Երևանի քաղաքապետարան:

3. Նախարարության տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի պետին՝ սույն հրամանը տեղադրել նախարարության պաշտոնական կայքէջում:

4. Միասնական սոցիալական ծառայության պետին՝ ապահովել սույն հրամանի հավելվածով հաստատված մեթոդական ուղեցույցի կիրառումը բժշկասոցիալական փորձաքննության, անձի ֆունկցիոնալության գնահատման հանձնաժողովների կողմից հաշմանդամություն ունեցող անձանց վերականգնողական անհատական ծրագիրը կամ ծառայությունների անհատական ծրագիրը կազմելու ընթացքում:

5. Սույն հրամանի հսկողությունը վերապահել Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի՝ ոլորտը համակարգող տեղակալին:

7/12/2023

X

ՆԱՐԵԿ ՄԿՐՏՉՅԱՆ

Signed by: MKRTCHYAN NAREK 3014890804

Ն. ՄԿՐՏՉՅԱՆ

Հավելված

Աշխատանքի և սոցիալական հարցրեի նախարարի

2023թ. հուլիսի 12 -ի N 104-Ա/1 հրամանի

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

ՊԵՏԱԿԱՆ ՀԱՎԱՍՏԱԳՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ ՕՐԹՈՊԵԴԻԿ ԿՈՇԻԿԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՑՈՒՑՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Օրթոպեդիկ կոշիկը հատուկ ձևի և կառուցվածքի կոշիկ է, որը նախատեսված է այն անձանց համար, որոնք ունեն ոտնաթաթի կառուցվածքային խնդիրներ և/կամ քայլքի ֆունկցիայի խանգարում: Օրթոպեդիկ կոշիկները ցուցված են այդ խնդիրների հետևանքով առաջացած քայլքի կորսված կամ նվազած ֆունկցիան վերականգնելու, ոտնաթաթերին ճիշտ դիրք տալու, ինչպես նաև ոտնաթաթերի կառուցվածքային շեղումների հետևանքով առաջացած խնդիրների ծանրացումը կանխարգելելու համար:

2. Օրթոպեդիկ կոշիկները պետական հավաստագրերի հիման վրա տրամադրվում են համաձայն սույն հավելվածի 3-րդ կետով սահմանված ցուցումների:

3. Օրթոպեդիկ կոշիկների տրամադրման ցուցումներն են՝

1) ստորին վերջույթի 30 մմ և ավելի կարճացում.

2) ոտնաթաթի (ոտնաթաթերի) մատների և ոտնաթաթի (ոտնաթաթերի) առաջային հատվածի ամպուտացիա.

3) վալգուսային (պրոնացիոն) կամ վառուսային (սուպինացիոն) թաթ.

4) սրունքի և/կամ ոտնաթաթի մկանների լուծանքային (պարալիտիկ) խախտումներ (ՄՈՒԿ, մկանային ատրոֆիաներ, հետվնասվածքային նեյրոպաթիաներ և այլն).

5) կրնկաթաթ.

6) խոռոչավոր ոտնաթաթ.

7) ոտնաթաթի մուրճանման մատներ, կծկված մատներ, Հալլուքս Վալգուս, Հալլուքս վառուս.

8) ոտնաթաթի բազմակի սպիներ.

9) էկվինովարուսային թաթ կամ ծուռթաթություն.

10) սնամեջ՝ էկվինոսային (ձիու) թաթ.

11) սրունք-թաթային հոդի անկիլոզ (արթրոդեզ), դեֆորմացնող օստեոարթրոզ.

12) լիմֆոստազ (փղախտ) և ակրոմեգալիա.

13) դիաբետիկ թաթի սինդրոմ.

14) կրնկային խթան.

15) ծուռթաթություն.

16) ոտնաթաթի ձևախեղումներ:

4. Պետական հավաստագրով անհատական պատրաստվող օրթոպեդիկ կոշիկներ չեն տրամադրվում հետևյալ դեպքերում.

1) ոտնաթաթի տարածուն տրոֆիկ փոփոխություններ.

2) ոտնաթաթի փափուկ հյուսվածքների տարածուն թարախային պրոցեսներ.

3) օրթոպեդիկ միջոցի հումքի հանդեպ ալերգիա: